12527

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«10» 11 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 261 - 25

Նախաձեռնող՝ ***«Սամէներջի» ՍՊԸ***
Տավուշի մարզ, Բերդ համայնք, Նորաշեն 5

Գործունեությունը՝ ***Վայք համայնքի Սարավան բնակավայրի վարչական տարածքում արևային էլեկտրակայանի կառուցում***
Վայոց ձորի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 261 - 25
« 10 » 11 2025թ.

Վայք համայնքի Սարավան բնակավայրի վարչական տարածքում արևային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող	«Սամէներջի» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեություն	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայր	Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Սարավան բնակավայր

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) և նախագծային փաստաթղթի՝ «Սամէներջի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Սարավան բնակավայրում արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Վայք համայնքապետարանի կողմից տրամադրված 2025թ. հոկտեմբերի 23-ի N 82 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք), «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված բաշխման ցանցին միացման տեխնիկական պայմանի (N S-110/0013/1-1, 4900 կՎտ հզորությամբ) համաձայն, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով գրանցված (կադաստրային ծածկագիր N10-039-0307-0088), սեփականություն հանդիսացող ընդհանուր 5.46 հա հողատարածքի սահմաններում, որի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Սարավան 5 հողամասում: Տարածքը տեղակայված է Սարավան բնակավայրից դեպի հյուսիս-արևելք 1.4 կմ, Սարալանջ բնակավայրից 1.2 կմ հեռավորությունների վրա: Տարածքին մոտ գտնվող այլ բնակավայրեր չկան: Տարածաշրջանով հոսող ամենամոտը Դարբ և Որոտան գետերն են: Տարածքի հեռավորությունը Երևան-Մեղրի (Մ2) ավտոմայրուղուց կազմում է մոտ 1 կմ: Տարածքում բացակայում է ծառաթփային բուսականությունը:

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից նախատեսվող գործունեության տարածքի ռելիեֆը լեռնաշղթաներով ու սարավանդներով է: Հայցվող տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 2020 մ բարձրության վրա: Տարածաշրջանում հիմնականում գերակշռում են սևահող կրազերծված խորքային կարբոնատային, իսկ որոշ հատվածներում մարգագետնատափաստանային սևահողանման մնացորդային հագեցած հողային տիպերը:

Գրունտային ջրերը, ըստ ֆոնդային տվյալների, գտնվում են 5 մ ցածր հորիզոններում: Գործունեության իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների աղտոտում չի նախատեսվում, քանի որ բուն գործունեության և հարակից տարածքներում բացակայում են մակերևութային ջրահոսքերը: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, քարաթափությունը, փլուզումը, բացակայում են: Համաձայն տեղեկատվության՝ հողամասը ներառված է ՀՀ ՆԳ նախարարի 26 ապրիլի 2024 թվականի թիվ 4-Ն հրամանով հաստատված սողանքավտանգ տարածքների ցանկում: Ըստ ընկերության կողմից ներկայացված ազդեցությունների գնահատման՝ նախատեսվող գործունեության աշխատանքների հզորությունը և մակերեսը չի հանդիսանա սողանքային երևույթների ակտիվացման պատճառ:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում բնության, պատմամշակութային հուշարձանները, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակները բացակայում են:

Համաձայն նախագծի՝ նախատեսվում է կառուցել 4.500 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային կայան հետևյալ աշխարհագրական հյուսիսային լայնության 39°42'24.05" և արևելյան երկայնություն 45°40'47.65 կոորդինատներով: Ֆոտովոլտային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 7956 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 635 Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 18 հատ 250 կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8 կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35 մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունն ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24 մ/վ է):

Արևային կայանի տարածքում տեղադրվելու է նաև 110/2x0.8 6600 կՎԱ հզորության ենթակայան: Բոլոր միացումներն իրականացվելու են եռակցումով, մետաղական կոնստրուկցիաները միացվելու են հողանցման կոնտուրին:

Տվյալ նախագծի իրականացման համար՝ կառուցվելու է 384 մետր 110 կՎ լարմամբ էլեկտրահաղորդման գիծ, տեղադրվելու է երկու հատ 110 կՎ ՕԳ-ի համար նախատեսված հենասյուններ՝ 1 հատ У110-3+5 և 1 հատ Y110-3+5 տիպի: Նշված հենասյունները տեղադրվելու են Վայք համայնքին պատկանող հողամասերում, որոնցից յուրաքանչյուրը զբաղեցնելու է 8 մ² տարածք, իսկ ողջ ուղեգծի համար համայնքի հետ կնքվելու է սերվիտուտի պայմանագիր: Գրունտային հատվածով անցկացնելիս մալուխները տեղադրվելու են 1.1 մ խորության վրա:

Արևային կայանի տարածքը ցանկապատվելու է 2 մ բարձրությամբ մետաղացանցով՝ դարպասային մուտքով: Ենթակայանի տարածքում տեղադրվելու են հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ:

Արևային էլեկտրակայանի տեղակայման շինարարական աշխատանքները տևելու են 7 ամիս, շինարարության ընթացքում աշխատելու են առավելագույնը 30 աշխատակից: Գործունեության իրականացման համար կազմակերպվելու է 2 շինհրապարակ՝ արևակայանի /ենթակայան/ և օդային գծի անցկացման տարածքում՝ ընդհանուրը 1000 մ² մակերեսով: Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր անթափանց ցանցաթաղանթով, ապահովվելու է գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ենթակառուցվածքների փոփոխություններ չեն կատարվելու, նոր ճանապարհներ չեն կառուցվելու, օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհները: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են արևակայանի, ենթակայանի և օդային գծի կառուցման, արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, օդային գծի

հենասյունների համար նախատեսված հորատանցքի փորման, հողատարածքի ցանկապատման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման, յուղընդունիչ հորի, պահակատան կառուցման, հողային աշխատանքներ: Հողային հանույթի տեղափոխում չի իրականացվելու, հանված հանույթը հանվելու և փռվելու է տեղում, իսկ քարակույտերը տեղափոխվելու են շինհրապարակից դուրս համայնքի կողմից նախանշված տարածք: Հողային հանույթն ընդհանուր կազմելու է 2030 մ^3, որից 495 մ^3 բուսահող: Հողի քանդման աշխատանքներն իրականացվելու են մեխանիզմով և ձեռքով: Հողային հանույթի հանումը, պահեստավորումը և օգտագործումն իրականացվելու է Կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի N 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աշխատողների համար անհրաժեշտ խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով: Տեխնիկական ջուրը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և տեղումներից առաջացող հոսքաջրերի հեռացման համար տեղադրվելու է շարժական բիոզուգարան՝ լվացարանով և պարզարան: Պարզեցված ջուրը օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է որպես շինաղբ: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվող նյութերը (մալուխ, մետաղ՝ ալյումին, պողպատ, ներկ, մեկուսիչ նյութեր, բետոն, խիճ, փայտանյութ և այլն) մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Տարածքում շինանյութերի և վառելիքի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Մարդու առողջության վրա ազդեցությունը մեղմելու, արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ:

Արևային կայանի շահագործման ընթացքում օդային ավազանի աղտոտման մակարդակը գնահատվել է ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են շինարարության ընթացքում ավտոմեքենաների և շինանարարական աշխատանքից, ինչը կրելու է ժամանակավոր բնույթ: Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով կառուցվելու է յուղընդունիչ: Դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու են համապատասխան տարաների մեջ և հանձնվելու են մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին:

Շահագործման փուլում մոդուլների ծառայման ժամկետը սպառվելուց հետո կամ դրանց վնասման դեպքում կկատարվի մոդուլների ապամոնտաժում, որոնք կկուտակվեն տարածքում տեղադրվող փակ պահեստային շենքում՝ մետաղական վագոն-տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը:

Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման ավարտից հետո կատարվելու է խախտված տարածքի վերականգնում, թափոնների հեռացում և այլն: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով, իսկ վերին մասը ծածկվելու է բուսահողով:

Գործունեության հնարավոր դադարեցման դեպքում Ընկերության կողմից նախատեսվում են գործողությունների պլան, որը ներառելու է սարքավորումների, արևային պանելների, էլեկտրասյուների ապամոնտաժում, թափոնների կառավարում, արևակայանի և ենթակայանի տարածքների կարգաբերում:

Արևային կայանի և ենթակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը շինարարության փուլում հիմնականում կապված են օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում օդային ավազան արտանետումների, ջրային և հողային ռեսուրսների օգտագործման, թափոնների կառավարման, կենսաբազմազանության, լանդշաֆտի փոփոխությունների, շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության, արտակարգ իրավիճակների հետ, իսկ շահագործման փուլում՝ կայանի անվտանգ շահագործման հետ:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսներ վտանգավոր նյութերի, այդ թվում տրանսպորտային միջոցներից և սարքավորումներից յուղերի հնարավոր ներթափանցման կանխարգելմանը, ՀՀ Կարմիր գրքերում հաշվառված բուսական և կենդանական տեսակների հայտնաբերմանն ու դրանց պահպանմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մշտադիտարկումներ:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացքում իրականացվել են արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ: Գնահատվել են հնարավոր բոլոր ազդեցությունները և մշակվել են ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետության վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, կադաստրի կոմիտեն, Վայոց ձորի մարզպետարանը, Վայքի համայնքապետարանը, Սարավան բնակավայրը և շահագրգիռ հանրությունը: Փորձաքննական գործընթացում հաշվի են առնվել ոլորտին առնչվող լիազոր մարմինների, ինչպես նաև ազդակիր համայնքի և շահագրգիռ հանրության կողմից ներկայացված կարծիքները, առաջարկություններն ու դիտողությունները:

Բնապահպանական միջոցառումների մշտադիտարկումների արդյունավետ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույն:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Վայոց ձորի Վայք համայնքի Սարավան բնակավայրում իրականացվել են երկու հանրային լսում, որոնց ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն և այլն/ մշտադիտարկումներ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր՝ բաց հասանելիությամբ:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել Հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը, ապահովել ազդակիր համայնքում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

- Գործունեության արդյունքում առաջացող վտանգավոր թափոնների (հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր, ինչպես նաև յուղոտված լաթեր, ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ, յուղերով աղտոտված ավազ, սև մետաղի ջարդոն, վնասված վահանակներ և այլն), հեռացումը, տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:

- Արևակայանի /էլեկտրական ցանցեր, ենթակայան, բաշխիչ սարքավորումներ/ կառուցման և շահագործման ընթացքում անվտանգության գոտու ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել 2023 թվականի ապրիլի 13-ի N523-Ն որոշման պահանջներով:

- Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շահագործման ժամկետի ավարտից հետո հետագա գործունեությունն (փակման փուլ) իրականացնել համաձայն Հաշվետվությամբ ամրագրված միջոցառումների:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սամէներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Սարավան բնակավայրի վարչական տարածքում արևային էլեկտրակայանի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան